

Մատակասգար և Մալտիվեան կղզիները, բայց հիւսիսային կողմերը բնաւ չգտուիր, ուր որ ընդհակառակն շատ կղաքիս կը գտուի, որուն գեղեցիկ մորթի թը իրենց պիտոյիցը կը գործածեն հոն տեղի բնակիչքը: Իսկ ասոր ներհակ բարեխառն երկիրներու մէջ քիչ կը գտուի, իսկ տաք կլիմաներու տակ ամենեւին չգտուիր:

Ազաքիսը իրեն կերակրոյ համար թուռն որսալու կ'ելլէ և շատը մէկ տեղ կը բռնէ. անոնց բոյնը կը փնտրուէ ու հաւկիթնին կը ծծէ. սկիւռ, դաշտամուկ, սեւախայտ առնէտ ալ կը բռնէ. նաև մեղր ալ կ'ուտէ ինչպէս ազուէսը և կուզը: Բայց այս երկու կենդանեաց որսալու կերպին մէջն ալ քիչ մը իրարմէ տարբերութիւն կայ: Կուզը շան ձեռքէն ազատելու համար իր ծակը կը փախչի. իսկ կզաքիսը կը թողու որ հեռուանց ետեւէն գայ, ու ինքը ծառոյ մը հանդրպաժին պէս մագլցելով վրան կ'ելլէ առանց մեծ աշխատանք մը քաշելու, ուսկից հանդարտ կերպով շանը անցնելը զննելէն վերջը՝ դարձեալ իր բանին գործքին կ'իջնէ: — Վիչ մը աւելի հաստ է քան զկուզը, իսկ զլուխը աւելի կարճ, ոտուրներն ալ կարճ ըլլալով՝ դիւրաւ կը վազէ: Ըստ վառվառն թուխ գոյն ունի. քթին ծայրը, պոչին վարի կէսը և ոտուրները աւելի թուխ են ու գրեթէ սև. պարանոցը դեղին է, ուր ընդհակառակն կուզինը ճերմակ է. ստեր խիստ բարակ է և քիչ կը թափի. առջևի կողմը փորուն վրայ կարմրագոյն է, վիզը և կուրծքին մէկ մասը պարանոցին գունոյն է:

Ազաքիսը կուզին պէս չաշխատիր իր ձագերուն համար անկողին պատրաստելու, և քիչ աշխատութեամբ աւելի հանգիստ կը մեծցընէ զանոնք: Արբոր ձագ պիտի հանէ՝ մագլցելով կ'ելլէ ծառի վրայ շինած սկիւռի բնակարանը, որ թուռնոյ բունոց պէս ճարտարութեամբ շինուած է, կը վռնտէ զկենդանին, բունին բերանը քիչ մը աւելի կը բանայ և հոն իր ձագերը կը հանէ. նմանապէս իրեն կը ծառայեն եղջերաւոր բուրն ու

ցընոյ տեսակի մը շինած հին բոյները, և հին ծառերու խոռոչները, ուսկից փայտփոր և ուրիշ թուռնները կը հաւածէ: Բայց կզաքիսն իր ձագերը երկու կամ երեքը մէկտեղ կը ձկնէ գարնան ժամանակները, որոնք աչուրնին գոց կը ծնանին, բայց շատ շուտով կը մեծնան, և մայրերնին իրեն ձագուց համար թուռն ու հաւկիթ կը ճարէ, ինչուան որ իրենց հետ կարենան որսի տանել զանոնք: Ազաքիսները և կուզերը՝ ինչպէս ուրիշ շատ կենդանիք, ներսերնին պզտի փամփուշտ մը ունին, որն որ մուշի նման հոտաւէտ նիւթով մը լեցուն է և մներնին ալ քիչ մը այս հոտն ունի. կզաքիսին միսը ուտելու կու գայ, իսկ կուզինը անախորժ է և մորթն ալ կզաքիսին մորթին պէս յարգի չէ: Ազաքիսը ինչպէս հիւսիսային Մերիկոյ, այսպէս Աւրոպիոյ և Նիւիոյ հիւսիսային կողմերը կը գտուի. և պէտք չէ սամուրին հետ շփոթել զասիկայ. սամուրը սև է և մորթը շատ աւելի յարգի: Ազաքիսին մորթին աւելի յարգի կտորն է կրունակէն սկսեալ մինչև պոչին ծայրը՝ գունին աւելի մութ ըլլալուն պատճառաւ: Ազաքիսին, սամուրին և սպիտակ աքիսին ձմեռուան մորթը Ռուսաստանի մեծ վաճառականութեան նիւթ մըն է, զորն որ Միպերիոյ ցրտասառոյց անապատներէն առատութեամբ կ'որսան, բայց մեծ ու վտանգալից աշխատութեամբ:

ՉԱՓԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՉԱՓԱԿՕՍՈՒԹԻՒՆ

Տասնորդակուս դրոշիւն չափոց ու կշոց :
(Տես երես 140)

Բ. Առիտ Տակերիտի. — Մակերուութի չափը իւր տարածութիւնն է, ուստի այս տարածութիւնը թէ իր երկայնութեանը և թէ իր լայնութեանը կրնայ չափուիլ: Բայն միութիւնը որ մակերեւոյթ մը մի և նոյն չափով թէ իր

երկայնութեանը և թէ իր լայնութեանը կը չափէ, քառակուսի չափ կ'ըսուի. ուրով տուեալ մակերևութի մը տարածութիւնը չափելն ուրիշ բան չէ, բայց եթէ փնտռել թէ քանի անգամ կը բուլանդակէ ծանուցեալ մեծութեամբ քառակուսի մը: Անոր համար է որ մակերևութի չափերը քառակուսի ալ կ'ըսուին:

Սակերևութի չափուց նոր միութիւնն է քառակուսի մէրը, կամ թէ այնպիսի քառակուսի մը, որ մէկ մեզր երկայն և մէկ մեզր լայն ըլլայ: Արկրաչափութիւնը կը սովորեցնէ որ քառակուսուց երեսին չափը կամ մակերևոյթը կը գտուի կողմունքներէն մէկը իր մով բազմապատկելով: Արդ քառակուսի մեզրին իւրաքանչիւր կողմը 10 տասնորդամեզր երկայնութիւն ունի. ուրեմն քառակուսի մեզրին մակերևոյթն է 10 անգամ 10 և կամ հարիւր քառակուսի քառանորդամեզր: Այնպէս ալ քառակուսի տասնորդամեզրին իւրաքանչիւր կողմն է 10 հարիւրորդամեզր, ուրով քառակուսի տասնորդամեզրին մակերևոյթն է 10 անգամ 10 և կամ հարիւր քառակուսի հարիւրորդամեզր: Առաջին քառակուսի հարիւրորդամեզրին ամէն մէկ կողմն է 10 հարիւրորդամեզր. որով քառակուսի հարիւրորդամեզրին մակերևոյթն է 10 անգամ 10 և կամ հարիւր քառակուսի հարիւրորդամեզր, ու քառակուսի մեզրին մակերևոյթն է տասը հազար կամ բիւր քառակուսի հարիւրորդամեզր: Առաջին քառակուսի հարիւրորդամեզրին ամէն մէկ կողմն է 10 հարիւրորդամեզր. որով քառակուսի հարիւրորդամեզրին մակերևոյթն է 10 անգամ 10 և կամ հարիւր քառակուսի հարիւրորդամեզր, ու քառակուսի մեզրին մակերևոյթն է տասը հազար կամ բիւր քառակուսի հարիւրորդամեզր: Արով մէկ քառակուսի տասնորդամեզրն է հարիւր քառակուսի հարիւրորդամեզր, այսինքն քառակուսի մը՝ որուն իւրաքանչիւր կողմն ըլլայ մէկ տասնորդամեզր՝ մակերևոյթն ալ է հարիւր քառակուսի հարիւրորդամեզր. մէկ քառակուսի հարիւրորդամեզրն է հարիւր քառակուսի հազարորդամեզր, այսինքն քառակուսի մը՝ որուն իւրաքանչիւր կողմն ըլլայ մէկ հարիւրորդամեզր՝ մակերևոյթն ալ է հարիւր քառակուսի հազարորդամեզր.

և մէկ քառակուսի հազարորդամեզրն է հարիւր քառակուսի բիւրորդամեզր. այսինքն քառակուսի մը՝ որուն իւրաքանչիւր կողմն ըլլայ մէկ հազարորդամեզր՝ մակերևոյթն ալ է հարիւր քառակուսի բիւրորդամեզր: Այս հետեալ բար քառակուսի մեզրին իւրաքանչիւր տասնորդան է տասը քառակուսի տասնորդամեզր, քառակուսի մեզրին իւրաքանչիւր հարիւրորդան է մէկ քառակուսի տասնորդամեզր, քառակուսի մեզրին իւրաքանչիւր հազարերորդան է տասը քառակուսի հարիւրորդամեզր, քառակուսի մեզրին իւրաքանչիւր բիւրորդան է մէկ քառակուսի հարիւրորդամեզր, և այլն. և կամ քառակուսի տասնորդամեզրն է հարիւրորդ մասն քառակուսի մեզրի, քառակուսի հարիւրորդամեզրն է հարիւրորդ մասն քառակուսի տասնորդամեզրի, քառակուսի հազարորդամեզրն է հարիւրորդ մասն քառակուսի հարիւրորդամեզրի, և այլն:

Այնպէս որ տեսանք մինչև հիմա՝ մակերևութի այս ամէն չափերն ալ քառակուսի են, և ասոնցմէ իւրաքանչիւրը անմիջապէս իրմէ նախընթացին հարիւրորդ մասն է, և հետևորդին հարիւրապատիկն է. անոր համար պէտք չէ շփոթել քառակուսի մեզրի մը տասնորդը, հարիւրորդը, հազարորդը, ... քառակուսի տասնորդամեզրի, քառակուսի հարիւրորդամեզրի, քառակուսի հազարորդամեզրի, ... հետ. վասն զի ըստ վերագոյն ասացելոցս մէկ քառակուսի մեզրն է հարիւր քառակուսի տասնորդամեզր, իսկ քառակուսի մեզրին տասնորդան է տասը քառակուսի տասնորդամեզր: Այնպէս ալ քառակուսի մեզրի մը հարիւրորդն ու հազարորդը կ'ընեն հարիւր քառակուսի հարիւրորդամեզր, և հազար քառակուսի հազարորդամեզր:

Հիմա ուզելով այս մակերևոյթնէրու քառակուսի մեզրին հետ ունեցած վերաբերութիւնները ըմբռնել, մեզի ընտանի քառակուսի մը ձեռք առնունքօրինակի համար քառակուսի ըսուած խաղին և կամ սարդանձին տախտակն ըլլայ. զի

տենք որ այս տախտակին ամէն մէկ կողմը ութ հաւասար մասունք բաժնուած է, և այս մասանց իւրաքանչիւրը հաւասար է այն քառակուսիներուն կողմին՝ որոնց վրայ խաղին քարերը կը շարուին: Այս քառակուսիներուն բոլորական թիւն է 64, որ է 8 թուոյն քառակուսին. ուստի քառակուսիներէն մէկուն կողմը կ'ըլլայ $\frac{1}{8}$ տամայի տախտակին կողման, և անոր մակերևոյթն ալ կ'ըլլայ $\frac{1}{64}$ տամայի տախտակին մակերևութին: Այս օրինակէս, զոր որ զիւրաւ կրնանք ընդհանրացուցանել, կը տեսնենք որ եթէ քառակուսւոյ մը կողմը ուրիշ քառակուսւոյ մը կողման տասնորդն է, իրեն մակերևոյթն ալ անոր մակերևութին հարիւրորդը կ'ըլլայ. և փոխադարձաբար եթէ քառակուսւոյ մը կողմը ուրիշ քառակուսւոյ մը կողման տասնպատիկն է, առաջնոյն մակերևոյթն ալ երկրորդին մակերևութին հարիւրպատիկը կ'ըլլայ:

Ուստի ասկէ կը հետևի որ գծական մեղրին յաջորդական ստորաբաժանմունքները տասնորդական կարգաւ կը յառաջատին, այսինքն մեղրին յաջորդական մանրամասունքը մէկմէկէ տասը տասը անգամ պզտիկ են. իսկ քառակուսի մեղրին յաջորդական ստորաբաժանմունքները հարիւրորդական կարգաւ կը յառաջատին. այսինքն քառակուսի մեղրին յաջորդական մանրամասունքը մէկմէկէ հարիւրական անգամ պզտիկ են, և անոնցմէ իւրաքանչիւրը իրմէ անմիջապէս նախընթացին հարիւրորդ մասն է, և իրմէ անմիջապէս հետևորդին հարիւրպատիկն է:

Այսպէս ճանչնալով քառակուսի մեղրին մանրամասանց ճշմարիտ բնութիւնը՝ հիմա կրնանք քառակուսի մեղրի մը տասնորդական մասը քառակուսի չափերու տրոհել: Ուստի այս թիւս 0^ր.բ, 48 առնունք մեզի օրինակ, որ քառակուսի մեղրի մը 48 հարիւրորդը կը բացատրէ. և որովհետև տեսանք թէ քառակուսի մեղրի մը իւրաքանչիւր հարիւրորդն է մէկ քառակուսի տասնոր-

դամեղր, ուրեմն 0^ր.բ, 48 թիւն ալ է 48 քառակուսի տասնորդամեղր: Այն պէս ալ 0^ր.բ, 0065 թիւը որ քառակուսի մեղրի մը 65 բիւրորդը կը բացատրէ, հաւասար է 65 քառակուսի հարիւրորդամեղրի. վասն զի քառակուսի մեղրի մը իւրաքանչիւր բիւրորդն է մէկ քառակուսի հարիւրորդամեղր: Որով այս թիւս 0^ր.բ, 4865 է 48 քառակուսի տասնորդամեղր և 65 քառակուսի հարիւրորդամեղր:

Ասկէ այս ընդհանուր կանոնը կը հանուի, որ քառակուսի մեղրի մը տասնորդական մասունքը քառակուսի տասնորդամեղր, քառակուսի հարիւրորդամեղր, քառակուսի հազարորդամեղր, և այլն, բացատրելու համար պէտք է այս տասնորդական մասը երկերկու թուանշանով դաս դաս բաժնել ստորակետէն սկսեալ, միտք դնելով որ եթէ վերջին դասը մէկ թուանշան ունենայ՝ զրոյ մը դնել աջակողմը. ստորակետէն ետև առաջին դասը քառակուսի տասնորդամեղրները կը բացատրէ, երկրորդ դասը քառակուսի հարիւրորդամեղրները կը բացատրէ, երրորդ դասը քառակուսի հազարորդամեղրները կը բացատրէ, և այլն:

Քառակուսի մեղրին բազմապատիկներն են քառակուսի տասնամեղր, քառակուսի հարիւրամեղր, քառակուսի հազարամեղր, և քառակուսի բիւրամեղր:

Քառակուսի տասնամեղրը այնպիսի քառակուսի մըն է՝ որ տասը մեղր երկայնութիւն և տասը մեղր լայնութիւն ունի, որով մակերևոյթն ալ 10 անգամ 10 և կամ հարիւր քառակուսի մեղր կ'ըլլայ, որ և նոյն է՝ 100 անգամ քառակուսի մեղր:

Քառակուսի հարիւրամեղրը այնպիսի քառակուսի մըն է՝ որուն թէ լայնքը և թէ երկայնքը հարիւր մեղր է, որով մակերևոյթն ալ 100 անգամ 100 և կամ բիւր քառակուսի մեղր կ'ըլլայ, որ և նոյն է՝ 100 քառակուսի տասնամեղր:

Քառակուսի հազարամեղրը այնպիսի քառակուսի մըն է՝ որուն իւրաքան-

չիւր կողմը հազար մեզր երկայնութիւն ունի, որով մակերևոյթն ալ 1000 անգամ 1000 և կամ միլիոն քառակուսի մեզր կ'ըլլայ, որ և նոյն է՝ 100 քառակուսի հարիւրամեզր:

Իսկ քառակուսի բիւրամեզրը այնպիսի քառակուսի մըն է՝ որուն թէ՛ երկայնութիւնը և թէ՛ լայնութիւնը բիւր մեզր է, որով մակերևոյթն ալ 10000 անգամ 10000 և կամ հարիւր միլիոն քառակուսի մեզր կ'ըլլայ, որ և նոյն է՝ 100 քառակուսի հազարամեզր:

Ուստի քառակուսի տասնամեզրն է 100 քառակուսի մեզր. քառակուսի հարիւրամեզրն է 100 քառակուսի տասնամեզր. քառակուսի հազարամեզրն է 100 քառակուսի հարիւրամեզր. քառակուսի բիւրամեզրն է 100 քառակուսի հազարամեզր:

Ընդարձակ դաշտաց ու արտորէից մակերևոյթներն ալ ուզելով քառակուսի մեզրով չափել, իրենց բացատրութեանը մէջ շատ թուանշաններով թիւեր կը մանեն, որոնք ոչ միայն կը դժուարացնեն անոնց թուական բացատրութեան պարզութիւնը, այլ նաև հաշիւն ալ կ'երկարեն. ուստի այս անյարմարութիւններս վերցնելու մտքով ուրիշ երկու քառակուսի չափեր ալ որոշուած են իբր միութիւն դաշտաց և արտորէից, ու մեզրէն մեծ և մեզրին տասնպատիկն են. և են առ կամ նաև և հարիւրաչափ:

Եւր կամ կալը քառակուսի մըն է՝ որ տասը մեզր երկայնութիւն ունի և տասը մեզր լայնութիւն, կամ թէ՛ այնպիսի քառակուսի մըն է՝ որուն իւրաքանչիւր կողմը մէկ տասնամեզր երկայնութիւն ունի. որով կալը հաւասար է հարիւր քառակուսի մեզրի, կամ թէ՛ հարիւրամեզր, որուն իւրաքանչիւր կողմը մէկ մեզր է, և հետևաբար քառակուսի մեզրն ալ է հարիւրորդ կալի և կամ հարիւրորդաչափ:

հարիւրամեզր քառակուսի մըն է, որուն թէ՛ երկայնութիւնը և թէ՛ լայնութիւնը հարիւր մեզր է, կամ թէ՛ մէկ հարիւրամեզր է. որով հարիւրակալը հաւասար է 100 անգամ կալի, 100 քառակուսի տասնամեզրի, և կամ մէկ քառակուսի հարիւրամեզրի. հետևաբար մէկ քառակուսի մեզրն է բիւրորդ հարիւրակալի և կամ բիւրորդաչափ:

Եւրամեծ երկիրներու մակերևոյթը չափելու համար, ինչպէս օրինակի համար տէրութեան մը երկիրն ընդարձակութիւնն իմանալու համար, կը գործածուի քառակուսի հազարամեզրը և քառակուսի բիւրամեզրը: Վառակուսի հազարամեզրն է 100 քառակուսի հարիւրամեզր, կամ 100 հարիւրակալ, կամ 10000 կալ, և կամ 1,000,000 քառակուսի մեզր: Վառակուսի բիւրամեզրն է 100 քառակուսի հազարամեզր, կամ 10000 հարիւրակալ, կամ 1,000,000 կալ, և կամ 100,000,000 քառակուսի մեզր:

Ուստի կ'ըսուի թէ՛ Վաղղիոյ մակերևոյթը կամ ընդարձակութիւնն է 530402,05 քառակուսի հազարամեզր. և կամ 530 քառակուսի բիւրամեզր, 402 քառակուսի հազարամեզր ու 5 հարիւրորդ քառակուսի հազարամեզրի: Ինչուան հիմա ըսածներս ամփոփելով՝ կը տեսնենք որ ըստ նոր դրութեան

և կամ 100 հարիւրակալ, կամ 10000 կալ, և կամ 1,000,000 քառակուսի մեզր: Վառակուսի բիւրամեզրն է 100 քառակուսի հազարամեզր, կամ 10000 հարիւրակալ, կամ 1,000,000 կալ, և կամ 100,000,000 քառակուսի մեզր:

Քառ. հազարորդամեզրն	է Միլիոներորդ քառակուսի մեզրի	=	0 ^ր . 0,000001
» հարիւրորդամեզրն	» Բիւրորդ	=	0 ^ր . 0,0001
» տասնորդամեզրն	» հարիւրորդ	=	0 ^ր . 0,01
» մեզրը, կի՞ հարիւրորդակալն	» հարիւրորդ կալի	=	1 ^ր . 0
» տասնամ. կի՞ կալը և կամ առն	» հարիւր քառակուսի մեզր	=	100 ^ր . 0
» հարիւրամեզրը, կի՞ հարիւրկն	» հարիւր կալ, կի՞ 10 հազար քառ. մ.	=	10,000 ^ր . 0
» հազարամեզրը, կի՞ բիւրակալն	» Բիւր կալ կամ միլիոն քառ. մեզր	=	1,000,000 ^ր . 0
» բիւրամեզրը, կի՞ 100 բիւրկն	» Բիւր հարիւրկն կի՞ 100 միլիոն քառ. մ.	=	100,000,000 ^ր . 0